

## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ռ

Միաբանական յանձնաժողովի մեակած ծրագիրը Մ.  
Արոտի սնտեսական վիհակի բարոնման մասին.

Առաջ. 4-ին Ս. Հայրապետը իւր հ. 1022 կոնդակով հրամայեց Սինօզի նախանդամ գերապատիւ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին՝ միաբանական ժողով գումարել, խորհելու Մ. Աթոռի տնտեսական կացութեան բարւոքման մասին և ապա ժողովի եզրակացութիւնը յայտնել Ն. Արքութեան ի տնօրէնութիւն: Այս հիման վերայ սեպտ. 6-ին գումարուեցաւ միաբանական ժողով, ուր կարծիքները փոխանակութիւն կատարուելուց յետոյ, հետևեալ բանաձևերն առաջարկուեցան.

Ա. «Միաբանական ժողովը ի նկատի առնելով, որ Մ. Աթոռի տնտեսական վիճակի բարւոքումը սերտ կապ ունի այն ընդհանուր ինդիւրների յաջող լուծման հետ, որոնք հայրապետական երեք յայտնի կոնդակներով հրամարակի վրայ դրուեցան և կենդանական ժողովի փակմամբ անկատար մնացին, կարևոր է համարում սրբազան նախագահի միջոցով խնդրել Ն. Վեհափառութեան որ բարեհաճէ մի անմիջական տնօրէնութեամբ պարզել ի գիտութիւն հայ ժողովրդեան, թէ ինչպէս պէտք է կարգադրուին այժմ վերոյիշեալ խնդիրները». Այս բանաձևն ընդունուեցաւ 14 ձայնով ընդդէմ 2-ի 7 հոգի ձեռնպահ մնացին:

Բ. «Միաբանական ժողովը կարևոր է համարում միաժամանակ ընտրել եօթն հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որ քննէ Մ. Աթոռի տնտեսական ներկայ վիճակը, պարզէ թէ ինչ պատճառներից քայքայումն և խանգարումն է յառաջ եկել այդ մասում և ինչ միջոցներ ձեռք պէտք է առնել Մ. Աթոռի իւրաքանչիւր հաստատութեան տնտեսական դրութիւնը բարւոքելու համար, ապա մշա-

կել ներքին կառավարութեան այնպիսի կանոններ, որոնցով բոլոր հաստատութիւնները վարչութիւնը յանձնուած լինի միաբանութեան կողմից ընտրուած և նորա առաջ պատասխանատու անձերին: Այդ բանաձևն ընդունուեցաւ քսան ձայնով ընդդէմ երեքի:

Ապա գաղտնի քուէարկութեամբ յանձնաժողովի անդամներ ընտրուեցան Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, Մեայրոպ, Կարապետ, Իսահակ, Գարեգին, Բարդէն և Ներսէս վարդապետները: Վերջիններս մի շարք ժողովների մէջ մշակեցին այն ծրագիրը, որ յառաջ է բերում ստորև և որ ներկայացուած էր միաբանական ժողովին, հետեւանքների մասին կհաղորդենք միւս անգամ:

1906 թուի սեպտեմբերի 6-ի երեկոյեան միաբանական ժողովի կողմից ընտրուած յանձնաժողովը՝ ընդ նախագահութեամբ Տ. Յովհաննէս եպիսկոպոսի, իւր անդամներից երկուսին յանձնեց ի մտոյ ծանօթանալ Մ. Աթոռի մտից և երկուսին ելից հաշիւների և նոցա զեկուցումները լսելով եկաւ հետեւեալ եզրակացութիւններին:

Ա. Սինօզում և ստորադրեալ տեւաններում հաշուարարական մասը այնպէս է կազմակերպուած, որ աթոռային եկամուտների հաշիւը ցանկալի կերպով չի պահուել, սովորաբար միայն արձանագրուել է ստացւող եկամուտը, բայց միջոցներ չեն ձեռք առնուել հետամուտ լինելու, թէ որչափ բարեխղճութեամբ են ժողովուել և ուղարկուել եկամուտները ինչպիսի տարբերութիւններ են եղել զանազան տարիների եկամուտների մէջ և ինչ պատճառներով, որչափ ապառիկներ են մնացել և այդ ապառիկները զանձուել են յետադայում, ստացել է արդեօք Աթոռը այն բոլոր եկամուտները, որ պէտք է ստանար զանազան տեղերից և արդեօք սրտշունձ չափով:

Բ. Թէպէտ Սինօզի և ստորադրեալ հաստատութիւնների կողմից երբեմնակի ուղարկուել են պաշտօնեաներ եկամուտներ ժողովող մարմինների հաշիւներն ու գործու-

նէութիւնը քննելու համար, սակայն այդ վերաքննութիւնը ունեցել է պատահական բնաւորութիւն և պակասել է կանոնաւոր վերահսկողութիւնը արդեանց աղբիւրների վրայ, որ անհրաժեշտ է այնպիսի մի բարդ և բազմակողմանի տնտեսութեան մէջ, որպիսին ունի Մ. Աթոռը իւր զանազանատեսակ եկամուտներով:

Գ. Կալուածների կառավարութեան գործը դրուած չի եղել հաստատուն հիմունքների վրայ և կատարուել է առհասարակ ժամանակակից արդիւնաբերութեան պահանջներին անհամապատասխան ձևով. ոչ միայն անտառային մեծ կալուածները ցանկալի արդիւնքը չեն տուել, ոչ միայն վանքապատկան գիւղերի տասանորդները անկանոն կերպով են ժողովուել, այլ և սեպհական հողերը, այգիները, տները, կրպակները և այլն, չեն շահագործուել, ինչպէս պէտք է:

Կենտրոնական վարչութիւնը մանրամասն տեղեկութիւն չի ունեցել բոլոր կալուածների և նոցա արդիւնաւորութեան մասին, թէ ի՞նչ չափով են եղել: Կան մի շարք կալուածներ, որոնց չափն ու արդիւնքը բոլորովին անյայտ է, կան կալուածներ, որոնք աչքի ընկնող արդիւնք են բերում, բայց որոշ չէ, թէ ի՞նչի վրայ է գործադրում կամ պէտք է գործադրուի այդ արդիւնքը և թէ ինչու ամբողջապէս կամ մասամբ Մ. Աթոռին չի հասնում:

Դ. Վիճակային աթոռահաս արդիւնքները նոյն համեմատական չափով չեն ստացուել բոլոր թեմերից, մինչգեռ Երևանի թեմը՝ իւր վիճակի պաշտօնատար անձանց ռոճիկը հոգալուց յետոյ, մնացածը (նախկին տարիներում մօտաւորապէս 20000) հասցրել է Աթոռին, միւս թեմերը ուղարկել են միայն օտարային կոչուած արդիւնքները, իսկ վիճակային արդիւնքը գործադրել են յաճախ թեմական իշխանութեան կարգադրութեամբ և յաւելումները տարէցտարի պահել վիճակային տեւաններում:

Կենտրոնական վարչութիւնը այդ նկատմամբ կանոնաւոր հաշիւ չի պահանջել թեմական իշխանութիւններից:

Ե. Իբրև հետևանք կալուածների գրաւման և վերջին տարիները մեր երկրում տեղի ունեցած խառնակութիւնների, մի շարք վիճակային և կալուածական արդիւնքներ իսպառ նուազել են և մի քանի տեղերում բոլորովին կտրուել:

Զ. Տպարանի՝ իբրև արդիւնաբերական հաստատութեան, կանոնաւոր գործառնութեանը խանգարել է այն հանգամանքը, որ տպագրուած նիւթերի արժէքը ստացուել է մասամբ անմիջապէս, իսկ մեծ մասամբ Սինոդի միջոցով այդպիսով հաշիւները շատ անգամ խառնուել են և տպարանական վարչութիւնը չի կարողացել ժամանակին ստուգել, թէ իւր արտահանած նիւթերի զինը ի՞նչ չափով է ստացուել և ի՞նչ չափով ապառիկ մնացել, չի կարողացել հետամուտ լինել այդ ապառիկները ժողովելու և ստուգել թէ ի՞նչպէս է հաւասարակչում մուտքը ելքի հետ: Արդիւնաբերութիւնը մեծ չափով փնասել է նաև վարչութեան յաճախակի փոփոխութիւնը և արտաքին միջամտութիւնը նորա գործառնութեան մէջ: Այն հանգամանքը, որ տպարանը կառավարում է միաբաններից պատահաբար կազմած խորհուրդներով, փոխանակ մի հաստատուն և դործի հմուտ վարիչ ունենալու, արգելք է լինում նորա գործառնութեան մէջ միութիւն և տեւականութիւն հաստատելու ընդարձակ չափով պատուէրներ ընդունելու և լայն ու արդիւնաւէտ շրջանառութիւն ունենալու,

Է. Մ. Աթոռի ագարակը՝ զուտ արդիւնաբերական հաստատութիւն լինելով՝ չի ունեցել իւր անկախ ու գործին համապատասխան տեսչութիւնը և դրուած չի եղել արդիւնաբերութեան այնպիսի հիմունքների վրայ, որ զգալի արդիւնք տայ, փոխանակ դժուարութեամբ ծածկելու իւր ծախքերը: Ագարակի անասնապահութիւնը կարօտ է հիմնովին փոփոխութեան, հողագործական բաժինը պէտք է զարգացնել ու նոյն պայմանների մէջ դնել:

Ը, Ելքի բաժնում՝ Մ. Աթոռի անտեսութեան մէջ, ամենից թերի և անտանելի կողմը ներկայայնում է միա-

բանութեանը սնունդ մատակարարելու այժմեան եղանակը: Այն հանդամանքը, որ 30—35 միաբանի համար նոյնչափ և աւելի ծախք է լինում խոհանոցի և սեղանատան վրայ, որչափ մօտաւորապէս տանապատիկ թուով ճեմարանականների համար և այնուամենայնիւ միաբանութիւնը աւելի քան անբաւարար սնունդ է ստանում, ակներև անպատեհութիւն է և թիւրիմացութիւն: Յիրաւի խոհանոցից օգտուում են վանքի ծառայողները և գրսի կարօտաւորներ, սակայն այդ օգնութիւնը թէ անտեսական և թէ բարեգործական տեսակէտից կատարում է ամեաանտեղի ձևով: Նոյն պայմանում է զտնուում նաև վանքի հացատունը:

Թ. Վանքը շատ աւելի մեծ թուով ծառաներ է պահում և աւելի մեծ ռոճիկ տալիս նոցա, քան իւր պէտքերը հոգալու համար անհրաժեշտ է: Ծառաների մի մօտը պահուում է իսկապէս ոչ թէ նրա համար, որ վանքը կարիք ունի նոցա ծառայութեան, այլ որ այս կամ այն պատճառով հարկ է զգացուել նոցա ապրուստի միջոց տալու: Տնտեսական պէտքը և բարերարութիւնը այդ ձևով միմեանց հետ կապելը անտեղի է հարկաւ և կարող է միայն զեղծումների պատճառ լինել եթէ ծառաներ կան, որոնք բազմամեայ ծառայութեան շնորհիւ իրաւունք ունին Մ. Աթոռի խնամքը վայելելու, այդ կարելի է անել զուտ բարեգործութեան ճանապարհով, և վանքի համար պահել այնչափ ծառաներ, որչափի անհրաժեշտութիւն կայ:

Ժ. Ոչ մի սահման չի եղել մինչև այժմ. թէ որչափ նիւթական միջոցներ կարող է տալ Մ. Աթոռը ճեմարանի պահպանութեան համար, սահման չի եղել ճեմարանի գիշերօթիկ սաների թուի նկատմամբ, իսկ այս սահմանները դժել անհրաժեշտ է, որպէս զի մի կողմից ճեմարանի տնտեսական մասի ծախքը չափազանց չաւելանայ՝ ի վնաս ուսումնականի, և միւս կողմից Մ. Աթոռը հնարաւորութիւն ունենայ նորա անհրաժեշտ նիւթական կարիքները հոգալու: Հարկը պահանջում է, որ ճեմարանը վերջապէս ունենայ իւր հաստատուն նախահաշիւը և մի առ մի որս

շուած լինի, թէ նա ինչպիսի սեպհական մուտքեր ունի  
 և սրչափ նպաստ կարող է ստանալ Մ. Աթոռից, որպէս  
 զի քստ այնմ՝ որոշուած լինին նաև նրա ծախքի սահ-  
 մանները:

Ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները և  
 նոցա այն ընդհանուր արգելները, որ ներկայումս Մ. Աթոռի  
 մուտքը զգալի չափով պակաս է ելքից և մինչև այժմ  
 եղած պայմաններում՝ անհնարին է այդ մուտքն ու ելքը  
 հաւասարակշռութեան բերել և տնտեսական անխուսա-  
 փելի քայքայման առաջն առնել յանձնաժողովս անհրա-  
 ժեշտ է համարում ամենից առաջ՝

Ար իբրև ընդհանուր տնօրէն Մ. Աթոռի տնտեսական  
 և վարչական գործերի, պատասխանատու Վեհափառ Հայ-  
 րապետի առաջ՝ ճանաչուի միաբանութիւնը. Մ. Աթոռում  
 եղած կազմով: Միաբանութիւնը պարբերաբար պէտք է  
 ընդհանուր ժողովներ կազմէ ամիսը մի անգամ, բացի  
 ամառուայ յունիս, յուլիս և օգոստոս ամիսներից, ուր  
 կըննուին Մ. Աթոռի վերաբերեալ խնդիրներ, պաշտօ-  
 նեաներ կընարուեն վանական հաստատութիւնների հա-  
 մար և կըննուեն նոցա գործունէութիւնն ու հաշիւները:

Ժողովը հրաւիրում է Հայրապետական Տեղապահը  
 պարբերաբար՝ որոշեալ ժամանակներին՝ Վեհափառ Հայ-  
 րապետի հաճութեամբ, կամ արտակարգ գէպքում հինգ  
 միաբանի առաջարկութեամբ, ուր նախագահում է ինքը,  
 կամ ժողովն ընտրում է նախագահ և քարտուղար մի  
 տարի ժամանակով:

Միաբանական ժողովի գործունէութեան և իրաւանց  
 սահմանների համար կարևոր է մշակել առանձին կանո-  
 նադրութիւն, իսկ առ այժմ՝ վանքի ներքին գործերը  
 կարգաւորելու համար և անյետաձգելի տնտեսական բա-  
 րեփոխութիւններ մտցնելու նպատակով կարևոր է նկատ-  
 ւում, որ Մ. Աթոռի բոլոր հաստատութիւնների վարիչ-  
 ները ընտրուեն միաբանական ժողովով և պատասխանա-  
 տու լինեն նրա առաջ:

Ըստ այսմ պէտք է ընտրել՝

1. Հինգ հոգուց բաղկացած մի տնտեսական խորհուրդ կամ վանական կառավարութիւն, որի մէջ անպատճառ լինեն նաև Սինոդի անդամներից մի կամ երկու հոգի և որը՝ իբրև Սինոդին գործակից մարմին, իւր ձեռքն առնէ բոլոր այն կալուածների կառավարութեան վերահսկողութիւնը, որոնց արդիւնքը ստանում է կամ պէտք է ստանայ Մ. Աթոռը:

Այդ խորհուրդը Սինոդի ձեռնտուութեամբ պէտք է ստուգէ, թէ ինչ վիճակում են գտնուում վերոյիշեալ կալուածները, ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել նոցա արդիւնաբերութիւնը աւելացնելու և կանոնաւորելու համար, պէտք է կառավարիչներ նշանակէ և իւր անդամներին ժամանակ առ ժամանակ ուղարկէ նոցա գործունէութեան վրայ հսկելու և նրանցից հաշիւ պահանջելու. նոյն խորհուրդը պէտք է ունենայ իւր հաշուապահը, կանոնաւոր հաշիւ պահէ Մ. Աթոռի եկամուտների համար և Սինոդի միջոցաւ ուղարկէ իւր անդամներին առ տեղեւան ստուգելու նոցա հաշիւը վիճակային ատեաններում:

2. Տպարանը պէտք է դարձնել անկախ զուտ արդիւնաբերական հաստատութիւն, որ կունենայ իւր տեսուչը՝ գործի համար անհրաժեշտ պաշտօնեաներով, յառաջ կվարէ գործը պարզ առևտրական միջոցներով և մուտքի ու ելքի հաշիւը ամբողջապէս կամփոփէ իւր մէջ ու կենթարկուի միմիայն տնտեսական խորհրդի հսկողութեանը:


3. Մ. Աթոռի ագարակը նոյնպէս պէտք է նկատուի ազատ, զուտ արդիւնաբերական հաստատութիւն. պէտք է ունենայ մի ընդհանուր վարիչ և մասնագէտ գիւղատնտես Անհրաժեշտ է ընդարձակել անասնապահութիւնը, հողագործութիւնը և այգեգործութիւնը, գիւղատնտեսութիւնը դնելով խելացի հիմունքների վրայ, որից յետոյ Մ. Աթոռի ագարակը կդառնայ մի կարևոր և արդիւնաւոր հաստատութիւն:

4. Վերացնելով Մ. Աթոռի միաբանական սեղանատունն ու հացագործութիւնը, ճեմարանի տնտեսական

վարչութեանը տալ աշակերտների հացի համար պահանջուած ալիւրը, միաբաններին սեղանից ստացած սննդեան փոխարէն որոշ յաւելումն ամսական ռոճկի վրայ, վանքում ծառայողներին վարձատրել մի միայն դրամով: Կերակրով և հացով չքաւորներին Մ. Աթոռից տուած օգնութեան փոխարէն, կազմակերպել մի աղքատախնամ յանձնաժողով, որի անդամները կլինեն երեք հոգի միաբաններից և երկու հոգի գիւղից, որը կաշխատէ իւրաքանչիւր կարօտեալի նպաստել կարիքների համաձայն:

Նախագահ յանձնաժողովի՝ Յովհաննէս Եպիսկոպոս

- |          |   |                  |
|----------|---|------------------|
| Անդամներ | } | Մեսրոպ վարդապետ  |
|          |   | Կարապետ վարդապետ |
|          |   | Իսահակ վարդապետ  |
|          |   | Գարեգին վարդապետ |
|          |   | Բաբգէն վարդապետ  |
|          |   | Ներսէս վարդապետ  |



**ՃԵՄԱՐԱՆԻ 32-րդ ՏԱՐԵԴԱՐՁԸ.**

Վերջին երեք տարիների ընթացքում յայտնի դէպքերի պատճառով ճեմարանի տօնը չէր կատարուում. ճեմարանի տօնի համար եկող ուխտաւորների սովորական բաղմունքիւնը նոյնպէս բացակայում էր. սակայն այս տարի, երեք տարուայ ընդհատումից յետոյ ճեմարանի տօնը նրա 32-րդ տարեդարձը սովորական շուքով կատարուեցաւ: ճեմարանի հիւսիսային բակը զարդարուած էր կանաչ կամարներով և զոյնզոյն լապտերներով, որ պատրաստել էին աշակերտները:

Շաբաթ օրը, սեպտ. 30-ին պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեցաւ ճեմարանի հիմնադիր հոգեւոյս Գէորգ կաթողիկոսի զերեզմանի վրայ: Հոգեհանգստից յետոյ Մայր Աթոռի միաբանութիւնը խուռն բաղմունքեան

Հետ դիմեց ճեմարանի որտեղ տարեկան Հաշուետուութիւն պիտի լինէր. հանդէսը կատարուեցաւ բացօթեայ, հիւսիսային բակում: Աւուր պատշաճի շարականից յետոյ ճեմարանի նոր տեսուչ տ. Մեսրոպ վարդապետը կարգացանցած 1905/6 ուս. տարուայ համառօտ հաշիւը որ քաղած էր ճեմարանի նախկին տեսուչ տ. Գարեգին վարդապետի վեհափառին մատուցած ընդարձակ զեկուցագրից: Հաշուետուութիւնից երևաց, որ անցեալ ուս. տարում ճեմարանում սովորելիս են եղել 316 աշակերտ, մի թիւ, որ ճեմարանի գոյութեան ընթացքում երբէք չէ եղել. այդ թւից 253 պիշերօթիկ էին, իսկ 63 երթեկեկ. տարուայ վերջը մասնագիտական բաժինն աւարտել են 8 հոգի, իսկ դպրոցականը՝ 20. զանազան պատճառներով հեռացել են և արձակուել 19 աշակերտ: Աշակերտների թիւը եկեղեցական թեմերի համաձայն եղել է այսպէս.

1) Երևանի	թեմից	158	աշակերտ
2) Վրաստանի	»	39	»
3) Արցախի	»	14	»
4) Շամախու	»	8	»
5) Աստրախանի	»	11	»
6) Բեսարաբիայի	»	11	»
7) Տաճկաստանի թեմերից		57	»
8) Պարսկաստանի	»	18	»

---

316

Իբրև նորութիւն աչքի ընկաւ այն իրողութիւնը, որ 1906 թ. սկզբից ճեմարանի տնտեսական կառավարութիւնը բոլորովին բաժանուել է վանական կառավարութիւնից Սինօզի հաստատած նախահաշուի համաձայն, որ 56,100 ուրբլի է:

Հաշուետուութիւնից յետոյ հայր տեսուչը դիմեց հասարակութեանը, պարզելով նրա առաջ ճեմարանի նեղ Ֆինանսական դրութիւնը, ապա յիշեց, որ վեհափառի կողմից հրաւիրւած կենտրոնական ժողովը հնարաւորութիւն չունեցաւ ի միջի այլոց նաև դպրոցական գործով

գրադուելու և որ ինքը, ուրեմն, դժուար կացութեան մէջ է դտնուում ճեմարանի ծրագրի և բիւդժէի մէջ մեծամեծ փոփոխութիւններ մտցնելու իրեն տրուած կոնդակի համաձայն: Ի վերջոյ հ. տեսուչը յորդոր կարգաց աշակերտներին, որ սրտանց նուիրուեն դպրոցական պարապմունքներին և արդարացնեն հայ ժողովրդի նրանց վրայ դրած յոյսերը: Այնուհետև խօսեցին ուսանողներից երեք հոգի, նիւթ դարձնելով օրուայ տօնը և ժամանակակից պահանջները, որ հարկաւոր են ժողովրդին: Հանդէսին մէջ ընդ մէջ երգում էր քառաձայն խումբը պ. Յ. Խաչատրեանի ղեկավարութեամբ: Հանդէսը փակուեց ժամի 1-ին:

Երեկոյեան ճեմարանի բակում հրավառութիւն կար. նոր շինած էլէքտրական լուսաւորութիւնը առանձին փայլ էր տալիս հանդիսին:

Աշակերտական խումբը երգում էր ազգային և ժողովրդական երգեր:

Ժողովրդի ցրուելուց յետոյ ճեմարանի ուսուցչական խումբը հ. տեսչի հետ միասին ընթրեց աշակերտական սեղանատանը, որտեղ կարդացուեցան շնորհաւորական հեռագրեր. Երևանի թեմ. դպրոցի ուսուցիչներից խօսեց պ. Չուբարեանը, այստեղ էլ բարեմաղթութիւններ եղան թէ ուսուցիչների և թէ աշակերտների կողմից ճեմարանի յարատեւութեան և յաջող ուս. տարին անցկացնելու համար:

